Այս տարուան բեմագրութիւնը կը հետազօտէ Հայաստանի եւ Վրաստանի աւանդութիւնները, մասնակցութեամբ Ուոլթերթաուելի աշխուժ է իր աւանդութիւններուն լաւատեղեակ հայ համայնքին: «Ռեւելյոզ» աւանդաբար իր փորձերը կը կատարէ Պոսթմընի մէջ: «Այս բեմագրութեան մէջ ներգործօն դերակատարութիւն ունի Ուոլթերթաուելի հայ համայնքը, - կ'ըսէ բեմադրիչ Փեթրիք Սուանընը: - Մանաւանդ՝ Ս. Երրորդութիւն եկեղեցին, ուր մեր կողմէ կը կատարենք, եւ անշուշտ Ամերիկայի Հայկական գրադարանին եւ թանգարանին պաշտօնէնութիւնը:

«Սինչ աշխարհը աւելի փոքր վայր մը կը դառնայ, կը մաղթենք, որ աւելի լայն տարողութեամբ հասկընանք զիրար», կը զրէ «Ռեւելյոզ» թատերախումբի ընթացքը: «Սինչ աշխարհը» թատերախումբի յայտագիրին մէջ: «Ռեւելյոզ» թատերախումբը կատարողական արուեստներու ոչ հասութեամբ ընկերութիւն մըն է, որ երաժշտական թատերախաղեր, երաժշտական արձանագրութիւններ եւ դաստիարակչական միւլթի մը պատրաստէ: Հիմնուած է 1971ին, Սասաչուսէթի մէջ, գրաւոր եւ երաժիշտ ճոն Լանկա-

«Մեր խումբին կորիզը կը կազմեն անգլերէն լեզուով ժողովրդային աւանդութիւնները: - կ'ըսէ Սուանընը, - սակայն երբեմն աւելի տարաշխարհիկ նիւթեր կը ներկայացնենք: Այս տարուան նիւթը կը սկսի Արարատ լեռան վրայ, որ Հին Կտակարանի ժամանակներուն կը գտնուէր Հայաստանի մէջ, ուր Նոյ մեծ պարտէզ մը կը ծոյգէնէ ջրհեղեղէն ետք: Թէեւ եւ պատմութիւնն ու երաժշտութիւնը մեծ մասամբ հայկական են, սակայն «Ռեւելյոզ»-ի մաս կազմող բազմաթիւ խումբեր, ինչպէս՝ «Մամրոզները եւ «Մորիս» պարախումբը, կը մասնակցին անոր»:

Թանգարանին պատասխանատուներէն տէր եւ տիկին Կէրի Ե Սիւզըն Լինտ - Սինանեանները, իբրեւ «աւանդութիւն փոխանցողներ», ստորագրած են «Ռեւելյոզ»-ի տարուան երկրորդին՝ Սուանընի եւ անոր խումբին փոխանցելով մասնագիտական խորհուրդներ հայ երաժշտութեան եւ ժողովրդային պարերու վերաբերեալ:


թաֆի կողմէ, ժողովրդային աւանդական երաժշտութեան, պարի եւ ծեսերու ընկալումը քաջալերելու նպատակով: Խումբը ելոյթներ կու տայ ամբողջ տարուան ընթացքին, մասնակցութեամբ՝ կամաւոր մասնակցներու եւ չափահասներու երգախումբերու, արհեստավարժ դերասաններու, երաժիշտներու, բեմադրիչներու եւ տարբեր մշակոյթներու «աւանդութիւնը վառ պահողները»: Հանդիսատեսներուն մասնակցութիւնը: «Ռեւելյոզ»-ի ելոյթներուն բնորոշ յատկանիշներն է: Թատերախումբին ամենեւեմ ծանօթ բեմագրութիւններն են «Քրիստոսը Ռեւելյոզ»-ները, որոնք կը կատարուին ձմեռային արեւադարձի օրը, եւ որոնք ցարդ ընդգրկած են միջնադարեան, վիքթորիան, ռուսական եւ ամերիկեան բնաբաններ: «Ռեւելյոզ»-ի թատերախաղերը ամեն տարի կը ներկայացուին ամերիկեան 12 քաղաքներու տարածքին: Ընկերութիւնը միջազգային ուղիով կը ստանայ Մասաչուսէթի պետական Մշակութային խորհուրդէն:



«Արարատ լեռան շուրջ կը բացուին հայկական առօրեայ կեանքին գերեզմանները», կը զրէ «Պոսթըմ Ֆինիքս» թերթը՝ անդրադառնալով «Ռեւելյոզ» խումբին հայկական ներկայացումին: Թատերախաղին կեղծողական տիպարը Սայաթ Նովան է, որուն գեղեցիկ ձայնը կը գերազանցէ ուտ նուագողները, որոնք կը հանդիպի ան «մրցունք» մը ընթացքին: Սակայն «Ռեւելյոզ»-ի թատերախաղերը միշտ կ'երթան դէպի սկիզբ, հետեւաբար միւլթ կը սկսի ջրհեղեղէն: Սայաթ Նովայի երգերը թատերախաղին առաջին արարի մէջ կ'երգեն սերը, եւ պատկառարարութիւն մը տեղի կ'ունենայ, տիկնիկային թատրոն մը կը ներկայացուի եւ լարախաղաց մը անցումը կը կատարէ հին ու նոր տարուան, կարգ ու կամոնքն Ալան Յովհաննէսի մէկ երգին կատարողութեան: Դադարէն ետք Սայաթ Նովա կը հրաւիրուի Թիֆլիս, Վրաստանի թագաւորին պատը, ուր կը սիրահարի թագաւորի քրոջ՝ Աննայի: Կը տեսնենք Թիֆլիսի հիմնադրութեան պարային պատկերը, «Արարատ» երգախումբը կ'երգէ վրացական բազմաձայն երգեցողութեամբ շարականներ, «Ռեւելյոզ»-ի դերակատարները «Արեւ մանչուկ» կը փաթեն չովկասեան գորգի մը մէջ... Սակայն թագաւորը կողմ իր քոյրը հարս տալ աշուղի մը, հետեւաբար տխրութիւն կայ ընդհանուր ուրախութեան մէջ: «Այս բոլորը կը ներկայացուին «Ռեւելյոզ»-ի իւրայատուկ ոճով եւ արհեստավարժ մօտեցումով, - կ'աւելցնէ «Պոսթըմ Ֆինիքս»:

Պատրաստեց՝ Լ. ԿԻՒՆՅԵԱՆ-ՍՐԱՊԵԱՆ

Մ Ա Ր Զ Ա Կ Ա Ն - Ա Շ Խ Ա Ր



ԼԻՐԱՆԱՆԵԱՆ ՊԱՏԵԹՊՈԼ

Հ. Մ. Ը. Մ. - ՌԵՍՈԼ ԺՈՒՆԻԷ՝ 86-69

Լիրանանի պատեթպոլի տղոց Բ. դասակարգի ախոյեաններին հարձի առաջին հանգրուանի մրցումներուն, Հ. Մ. Ը. Մ. ի ներկայացուցչական խումբը տպաւորիչ ձեւով սկսաւ դարձի մրցումները, երբ իր դաշտին «Ատոմ եւ Սելլա Թնճուկեան» մարզադաշտին վրայ 86-69 արդիւնքով պարտութեան մատնեց իր հիւրը Ռեսոլ Ժուլիէն, որմէ երթին 69-61 արդիւնքով պարտութիւն մը կրած էր:

Ա. կիսախաղին 49-34 արդիւնքով գերազանցելէ ետք իր մրցակիցը, Բ. կիսախաղին եւս ճնշելով անոր վրայ տարաւ վերջնական յաղթանակը: Առաջին քորթրին, Հ. Մ. Ը. Մ. 28-19 արդիւնքով յաղթանակ տար վրայ, երկրորդին՝ 21-15, երրորդին՝ 17-16, իսկ չորրորդը վերջ գտաւ 20-20 արդիւնքով:

Դարձի 2րդ հանգրուանի մրցակիցը պիտի ըլլայ ընդհանուր դասաւորման պարագլուխի դիրքը դրաւոյ նախաժողովը: Մրցումը տեղի պիտի ունենայ Շանիլիի նորակառոյց դաշտին վրայ (Տիբ էլ Մըհտի), կիրակի, 19 Յունուարին, ժամը 21:00ին:

Հ. Մ. Ը. Մ. ի համակիրներէն կը սպասուի ներկայ ըլլալու այս մրցումին, որպէսզի Հ. Մ. Ը. Մ. ի տղաքը արձանագրեն դարձի իրենց երկրորդ յաղթանակը:

ԷՆ. ՊԻ. ԷՅ.

ԼԷՅՔԸՐԶ, ՍԻՔԱՐԸՐԶ ԵՒ ՍԵԼԹԻՔՍ՝ ՅԱՂԹԱԿԱՆ

ԷՆ. ՊԻ. էՅ. ի երէկուան մրցումներուն, Լոս Անճելըս Լէյքըրը արձանագրեց եղանակի իր 18րդ յաղթանակը, 90-82 արդիւնքով յաղթական վերադառնալով Նիւ Օրլինզի դաշտէն: Յաղթական կազմին մարզիկներէն Բոսպէ Պրայնթը նշանակեց 36 կէտ եւ 11 ուրպաւունք:

Ֆիլատելֆիա Սիքըրը կը դաշտին վրայ մէկ կէտի տարբերութեամբ պարտութեան մատնեց Նիւ Ճըրզի Նէյթը (108-107), այդ ալ յետ երկարաձգման:

Իր կարգին, Պոսթըն Սելթիքս յաղթանակ մը արձանագրեց 86-66 արդիւնքով պարտութեան մատնելով Աթլանթա Հորսը:

Ստորեւ երկուուան մրցումներուն արդիւնքները:
Միլուոքի Պաքս - Թորոնթո Ռեփթըրզ 99-87
Պոսթըն Սելթիքս - Աքլանթա Հորս 86-66
Ինտիանա Փէյլըրզ - Մայամի Հիթ 104-81
Ֆիլատելֆիա Սիքըրը - Նիւ Ճըրզի Նէթք 108-107

Լոս Անճելըս Լէյքըրը - Նիւ Օրլինզ 90-82
Սաքրամենթո Քիլզ - Տայաս Մայլըրիքս 123-94
Նիւ Յորք Ռոքեթք - Ֆեոնիքս Սանզ 102-96
Եուքա Ճէգ - Տեքսաս Նակթըք 92-81
Փորթլենտ Թրէյլ Պլէյըրզ - Մեմֆիս Կրիզլիզ 100-92

Միցենտրա Վուլվզ - Լոս Անճելըս Քիլթրըք 95-64
Կոլորադո Սթըյք Ուորիըրզ - Քիլթրըք Քաւալիըք 108-80

Ստորեւ այսօրուան երկու մրցումներուն յայտագիրը:
Ուաշինգթըն Ուիզըրզ - Օրլանտո Մեցիք Եուքա Ճէգ - Սիքըրը Սուփըրսոնիքս

ՍՊԱՆԻՈՅ ՖՈՒԹՊՈԼԻ ԲԱԺԱԿԻ ՄՐՅԱՇԱՐՔ

ՌԵԱԼ ՊԵԹԻՍ, ԱԼԱԻԷՍ ԵՒ ՌԵԱԼ ՎԱՅԱՏՈԼԻՏ ԴՈՒՐՍ ՄՆԱՑԻՆ

Սպանիոյ ֆուտպոլի բաժակի մրցաշարքին (ծանօթ՝ Թագաւորի բաժակ անունով), Գ. հանգրուանի դարձի մրցումներուն, Ռեալմադրիտ Զուէլվա յաջողեցաւ ապահովել քառորդ աւարտականին իր տոմարը, իր դաշտին վրայ 1-0 արդիւնքով պարտութեան մատնելէ ետք Ռէալ Պեթիսը (երթ՝ 0-0):

Մրցաշարքէն դուրս մնացողներուն շարքին եղան Ալալես եւ Ռէալ Վալադոլիդը:

Ստորեւ՝ Գ. հանգրուանի դարձի մրցումներուն արդիւնքները (փակագրի մէջ նշուած են երթի մրցումներուն արդիւնքները, իսկ զլրատակները նշուած խումբերը կը հասնին քառորդ աւարտականին):

ՆՈՒԷԼԱ - ՌԵԱԼ ՊԵԹԻՍ 1-0 (0-0)
Ալալես - ՄՈՒՐՍԻԱ 1-2 (0-0)
ՏԵՓ. ԲՈՐՈՒՆԱ - Ալիքանթ 4-1 (1-1)
ՍԵԻԼԼԱ - Նումանչա 2-1 (3-1)
ՌԵԱԼ Վալադոլիդ - ՄԱՅՈՐԳԱ 1-4 (2-2)
ՕՍԱՍՈՒՆԱ - ՌԵԱԼ Ինիոն 1-1 (4-0)
ԱԹԼ. ՄԱՏՐԻՏ - ԽԵՐԵՍ 3-0 (1-0)
ՌԵԱԼ ՄԱՏՐԻՏ - ԹԵՐԱՍԱ 4-2 (3-3)
(Քառորդ աւարտականի մրցումներուն վիճակաձգողութիւնը տեղի կ'ունենայ այսօր):

ՄԱՆԶԵՍՔԸՐ ԵՌԻՆԱՅԹԸՏ ՄՕՏԷՆ ՀԵՏԱՔՐՔՐՈՒԱԾ ՔԼՈՉՈՎ

Անգլիական մամուլին համաձայն, Մանչեսթըր Եունայթըտ ամէն ձիգ կ'գործ կը դնէ իր կազմին միացնելու համար գերմանացի յառաջապահ Միրոսլաւ Բլոշլը:

Քայլերը այսուրեքնի պատասխանատուները, անցեալ Դեկտեմբերին յայտնեցին, թէ Մանչեսթըրի մարզիչ Ալեքս Ֆերըրարին այդ ուղղութեամբ իրենց պաշտօնագրին առաջարկ ներկայացուց, նկատի ունենալով, որ մասնաւոր խումբը կը գտնուէր տնտեսական դժուար պայմաններու մէջ:

Ըստ կազմակերպչական Տէլի Մէյլօրաթերթին, Եունայթըտ իր կազմին միացնելու համար Բլոշլը, պատրաստ է հինգ միլիոն Էուրօ վճարել գերմանական ակումբին: 24 տարեկան Բլոշլը իր կազմին միացնելով, Մանչեսթըրը կ'ունայթըտ յարմարակազմին արեւելի վորացըներ, թէեւ Ռուտ Վան Նիսթըրույ քաւական լաւ արդիւնք կ'արձանագրէ խումբին հետ:

24 միջազգային մրցումներու ընթացքին, Բլոշլ Գերմանիոյ ֆուտպոլի ազգային խումբին հետ նշանակած է 14 կոլ, որոնց հինգը՝ 2002ի Մոնտիալին:

ԱՒՍՏՐԱԼԻՈՅ ԹԵՆԻՍԻ ԲԱՅ ՄՐՅԱՇԱՐՔ

-ՆԱԼՊԱՆՏԵԱՆ ԱՆՑԱԻ Գ. ԸԱՆԳՐՈՒԱՆ - ԱՅՍՕՐ՝ ՍԱՐԳՍԵԱՆ - ՖԻԼԻՓՈՒՍԻ ՃԱԿԱՏՈՒՄ

Աւստրալիոյ Թենիսի բաց մրցաշարքի չորրորդ օրուան մրցումներուն, երէկ շարունակուեցան տղոց եւ աղջկանց Բ. հանգրուանի մնացեալ մրցումները:

10րդ դասուած արժանիքի նախաժողովի Նալպանտեան ապահովեց Գ. հանգրուանին իր տոմարը, երբ աւստրալիացի ձէյմըն Քրայլի դէմ ան արձանագրեց հանգրուան յաղթանակ մը 6-1, 7-6 եւ 6-3 արդիւնքով պարտութեան մատնելով իր մրցակիցը:

Մինչ Նալպանտեան կ'արձանագրէր հանգրուան յաղթանակ մը, անգլիս անուանի մարզիկներ, որոնց կարգին՝ չիլիցի Ֆեռնանտո Կոնզալէս (դասուած՝ 13րդ), Ռիչըրտ Քրայլէք (Հոյանտա) եւ 30րդ դասուած Կոնսթանտինոս Քրայլի (Պրագի) դուրս կը մնային մրցաշարքէն:

Աշխարհի թիւ 1 դասուած Թենիսմէն Լէյթըն Զուլիթ (Աւստրալիա) իր կարգին յաղթանակ մը արձանագրեց, երբ 6-1, 6-0 եւ 6-1 արդիւնքով պարտութեան մատնեց իր ազգակիցը՝ Թոմ Լարքսմըր (դասուած՝ 235րդ): Զուլիթ իր յաղթանակը արձանագրեց 74 վայրկեանի ընթացքին:

Պրագիցի Կոնսթանտինոս



Դաւիթ Նալպանտեան

10:30ին (Պէյրուի ժամով) Սարգիս Սարգսեան պիտի ճակատի Մարք Ֆիլիպուսի դէմ (Աւստրալիա): Իսկ Դաւիթ Նալպանտեանի Գ. հանգրուանի մրցակիցը պիտի ըլլայ 20րդ դասուած Կոնսթանտինոս Քրայլի Չարլէ Մալիսէ:

9.- Էնտի Ռոտիք (Մ. Ն.) - Ատրիան Վուանէա (Ռումանիա) 6-2, 6-2 եւ 6-2

Ֆեռնանտո Վիչենթե (Սպանիա) - 19.- Իկ-Գալիո Շելա (Արժան-թիւ) 6-3, 6-3, 2-6 եւ 6-3

25.- Միխայիլ Եուժնի (Ռուսիա) - ժոզէֆ Սիլիանի (Աւստրալիա) 6-2, 6-3 եւ 6-3

7.- Եիլի Նովաք (Չեխիա) - Օլիվիէ Ռոշիս (Պիլիպին) 7-6, 7-6, 4-6, 4-6 եւ 6-3

1.- Լէյթըն Զուլիթ (Աւստրալիա) - Թոմ Լարքսմըր (Աւստրալիա) 6-1, 6-0 եւ 6-1

ԱՂՁԻԿՆԵՐ

20.- Էլենա Պոլիցա (Ռուսիա) - Ռիքա Կրանտե (Իտալիա) 6-1 եւ 6-2

16.- Նաքալի Տըշի (Ֆրանսա) - Տաթա Պետանովա (Չեխիա) 6-3 եւ 6-3

1.- Սերենա Ուիլիըմս (Մ. Ն.) - Էլս Բալենս (Պիլիպին) 6-4 եւ 6-0

26.- Թամարին Թանուկարն (Թայլանդ) - Ալիսա Ժիտըրովա (Ռուսիա) 6-2, 3-6 եւ 6-3

4.- Քիմ Քլիսթըրք (Պիլիպին) - Փեթրա Մանտուլա (Հունգարիա) 6-0 եւ 6-0

11.- Մակտայեա Մալիեա (Պուլարիա) - Սեո Եուկ-ժեոնկ (Հարաւային Գորեա) 2-6, 6-4 եւ 6-1

10.- Չանտա Ռուպին (Մ. Ն.) - Մարի Փիքս (Ֆրանսա) 0-6, 6-4 եւ 6-2

19.- Ամանտա Բոքերքը (Հարաւային Աֆրիկէ) - Ելենա Եանքովիչ (Եւրոպայի) 6-2, 4-6 եւ 6-4

Քլարա Բուքարովա (Չեխիա) - 6.- Մոնիքա Սելէշ (Մ. Ն.) 6-7, 7-5 եւ 6-3

8.- Անտարա Միլիք (Ռուսիա) - Էմանուէլ Քալիարտի (Չեխիա) 5-7, 6-2 եւ 6-0

25.- Մեկեան Շոկեւսի (Մ. Ն.) - Լուսիլա Սերվանովա (Սլովակիա) 6-1 եւ 6-1

18.- Էլենի Տանիլի-տու (Յունաստան) - Էմիլ Ֆրագիեր (Մ. Ն.) 6-1 եւ 6-2

ԼՈՒՐԵՐ՝ ՀԱՅՐԵՆԻ ՄԱՐԶԱՇԽԱՐՀԷՆ

● ՅԱՌԱՋԻԿԱՅ 18էն 23 Յունուարին ժընեւի մէջ (Զուիցերիա) տեղի կ'ունենան ԵՈՒ. Է. ԷՖ. Ա. ին մաս կազմող 15 երկիրներու պատուիրակութեան համար նախատեսուած վերապատրաստման յատուկ դասընթացները, որոնց կը մասնակցի նաեւ Հայաստանի ֆուտպոլի ֆետերասիոնի գործադիր տնօրէն Արման Յովհաննիսեան: Յովհաննիսեան նաեւ իր մասնակցութիւնը պիտի բերէ Յունուար 28էն 30 նոյն քաղաքին մէջ տեղի ունենալիք ֆուտպոլի ակումբներու արտօնազերծներուն հետ կապուած՝ ԵՈՒ. Է. ԷՖ. Ա. ի յատուկ սեմինարին:

● ՀԱՅԱՍՏԱՆԻ ախոյեան «Փիւնիկ» Երեւան, որ այժմ Սոչիի մէջ բանակավայրի մէջ է պատրաստուելու համար Մոսկուայի մէջ տեղի ունենալիք ԱՊՀի եւ Պայթեան երկիրներու ախոյեանութեան բաժակի մրցաշարքին, շատ հաւանաբար իր կազմին միացնէ պրագիցի մարզիկներ, որոնք իրենց մասնակցութիւնը կրնան բերել Հայաստանի ախոյեանութեան մրցումներուն: Այդ մարզիկներն են. Ժիլմար Նոկէյրա, Ֆլաւիո Ռոտիլիէ, Հենանտէս Քորտէյրօ եւ Մայքոն Տանտուքա:

● ՀԱՅԱՍՏԱՆԻ ֆուտպոլի աղջկանց ազգային խումբը, որ առաջին անգամ ըլլալով իր մասնակցութիւնը պիտի բերէ Եւրոպայի ախոյեանութեան մրցաշարքին, գտումի իր առաջին մրցումը պիտի կատարէ յառաջիկայ Օգոստոս 21ին՝ Յունաստանի դէմ: Ապա, Հայաստան պիտի ճակատի Աւստրիոյ դէմ (Սեպտեմբեր 27ին), իսկ Հոկտեմբեր 21ին՝ Սլովակիոյ դէմ: Իսկ 2004ին անիկա պիտի կատարէ դարձի մրցումները՝ հետեւեալ յայտագրին հիմամբ. 2 Մայիսին՝ Աւստրիա - Հայաստան, 6 Մայիսին՝ Սլովակիա - Հայաստան եւ 28 Յունիսին՝ Հայաստան - Յունաստան:

Հակառակ անոր որ Հայաստանի ֆուտպոլի աղջկանց ազգային խումբը տակաւին նոր սկսած է մտնել միջազգային ասպարէզ, սակայն Հայաստանի ֆուտպոլի աղջկանց ֆետերասիոնի նախագահ Հրաչեայ Գրիգորեանի համաձայն, հայ մարզիկուհիները յաւանապէս պատրաստուած են այս մրցաշարքին, մանաւանդ նկատի ունենալով այն պարագան, որ միջազգային տարրեր տեսակի երեք մրցաշարքերու ընթացքին անոնք յաջողած են լաւ արդիւնքներ արձանագրել, որոնց կարգին՝ նաեւ յաղթանակ:

ՖՐԱՆՍԱՅԻ ՖՈՒԹՊՈԼԻ ԱՄՈՅԵԱՆՈՒԹԻՆ

ՆԻՍ - ՄԱՐՍԷՅ ՊԱՅՔԱՐԸ ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԻ

Ֆրանսայի ֆուտպոլի ախոյեանութեան 22րդ հանգրուանի մրցումներուն, պարագուլիսի դիրքը գրաւող Նիս անգամ մը եւս յաջողեցաւ գերազանցել Մարսէլը, այս անգամ սակայն իր ունեցած կոլէկըրէյճին շնորհիւ եւ ոչ թէ կէտերու տարբերութեամբ:

Նիս, որ 2-2 արդիւնքով հաւասարութիւն մը արձանագրեց նախափերջին դիրքը գրաւող Մոնպելիէի հետ, այս վերջինին դաշտին վրայ տեղի ունեցած մրցումին, ունեցաւ 38 կէտ: Նոյնքան կէտ ունի նաեւ Մարսէլ, որ 2-0 արդիւնքով պարտութեան մատնեց Ռեննը (15րդ):

Լիոն, որ լաւագոյն առիթը ունէր գրաւելու ընդհանուր դասաւորման պարագուլիսի դիրքը, 2-0 արդիւնքով անակնկալ պարտութիւն մը կրեց Պարիսի դաշտին վրայ (12րդ): Անիկա այժմ երկու կէտով եւս կը մնայ անոնցմէ:

Փարիս Սէն Ժերմէնի մարզիչ Լուիս Ֆերնանտէս քիչ մը հանգստացաւ, երբ անոր կազմը 1-0 արդիւնքով պարտութեան մատնուց 18րդ դիրքը գրաւող Լը Քալըրը: Սէնտէ, թէ անցեալ Դեկտեմբեր 4էն Լը վեր մայրաքաղաքի կազմը իր դաշտին «Փարք Տը Փրէնս»ի մէջ յաղթանակ չէր արձանագրած:

23րդ հանգրուանին անոր կազմը կարելոր մըրցում ունի կատարելիք, երբ այցելէ «Սթալ Տի Ռէ» դաշտը, ուր հիւրը պիտի ըլլայ Նիսի:

Այլ կարելոր հանդիպում մը պիտի ըլլայ Օքսէր - Մարսէլ ճակատումը, ինչպէս նաեւ Լիոն - Սոչօ հանդիպումը:

Ստորեւ՝ 22րդ հանգրուանի մրցումներուն արդիւնքները.

Սոչօ - Մոնպէր	0-0
Պարիս - Լիոն	2-0
Կենիկան - Օքսէր	0-2
Մոնպելիէ - Նիս	2-2
Փարիս Ս. ժ. - Լը Քալըր	1-0
Սթալ - Մարսէլ	1-1
Լանս - Նանս	2-0
Սթրասպուրկ - Պորտօ	(յետաձգուած)
Թրուա - Լիլ	(յետաձգուած)

ԴԱՍԱԻՈՐՈՒՄ

	ՄՐՅ. ԿԷՏ	
1. Նիս	22	38 (28-16)
2. Մարսէլ	22	38 (23-20)
3. Լիոն	22	36 (37-27)
4. Սոչօ	22	35 (32-20)
5. Մարսէլ	20	35 (22-17)
6. Սոչօ	21	34 (23-14)
.....		
18. Լը Քալըր	21	19 (14-25)
19. Մոնպելիէ	21	17 (19-31)
20. Թրուա	21	16 (14-23)

ԱՐԻԷԼ ՇԱՐՈՆ ԿԸ ՎԵՐԱԳՏՆԷ ԻՐ ԴԻՐԸ՝ ՅԱԴԹԱՎԱՐԵԼՈՎ ՄԵԾ ԳԱՅԹԱԿՂՈՒԹԻՒՆ ՄԸ

Իսրայելի ընտրություններին երկու շաբաթ առաջ, վարչապետ Արիել Շարոն կը շարունակէ մնալ առաջին դիրքի վրայ՝ յաղթահարելով մեծ գաղթականության մը, որուն պատճառով իր ժողովրդականությանը նահանջ արձանագրած էր անցնող երկու շաբաթներուն: Քանի մը օրէ ի վեր սակայն, Շարոն վերագտած է իր դիրքը եւ կամայ - կամայ կը վերատիրանայ կորսնցուցած կէտերուն:

«Հաարէց» օրաթերթին կողմէ կազմակերպուած հարցախոյզի մը արդիւնքներն համաձայն, Շարոն եւ անոր ղեկավարած Լիքոն կուսակցութիւնը պիտի յաջողին 30էն 34 աթոռ ապահովել Քնեսէթի մէջ: Նոյն ձեւի արդիւնքներ հրապարակեցին նաեւ «Մաարիւ» եւ «Ետտոթ Ահրոնոթ» օրաթերթերը: Հարցախոյզները կը նախատեսեն, որ Աշխատաւորական դեկավար Ամրոն Միցնա 19էն 20 աթոռ ձեռք ձգէ խորհրդարանին մէջ: Միցնա չէր յաջողած օգտուիլ Շարոնը հարուածող գաղթականութենէն՝ մնալով տկար դիրքի մը վրայ: Հարցախոյզներուն համաձայն, Աշխատաւորական կուսակցութեան ղեկավարը իրմէ հեռա-

ԱԶԳԱԿ ԿՐՈՂ ՈՒՍԱՆՈՂՆԵՐՈՒ ՀԱՐՅՈՎ

ԹՈՒՐԹ ԵՐԵՍՓՈՒՍԱՆՆԵՐ ԿԸ ՀՐԱԺԱՐԻՆ ԾՐԱԳԻՐԷ ՄԸ, ԲԱՆԱԿԻՆ ԶԳՈՒՇԱՅՈՒՄԷՆ ԵՏԹ

ԱՆԳԱՐԱ, 16 (ԱՅՖ).— Թուրք երեսփոխաններ Հինգշաբթի օր հրաժարած են ծրագիրէ մը՝ ներելու համալսարաններէ վտարուած ուսանողներու, իսլամական ոճով լաշակ կրած ըլլալու յանցանքով, բանակէն զգուշացուած մը ետք, յայտնած են խորհրդարանական աղբիւրներ:

Խորհրդարանին կրթական հարցերու յանձնարարական անդամները որոշած են հրաժարիլ ներումի կապուած աշխատանքին, որ պիտի ջնջէր 2000ի վերջերէն ի վեր ուսանողներուն դէմ պատժամիջոցները կարգապահական եւ ներկայ չգտնուելու պատճառներով:

Միջոցառումը փորձ մը կը նկատուէր իշխող Արդարութեան եւ Բարգաւաճման կուսակցութեան կողմէ՝ լաշակ կրելու յանցանքով վտարուած ուսանողներուն առիթ տալու, որպէսզի համալսարան վերադառնան:

Իսլամական ոճով լաշակ կրելը արգելուած է հանրային գրասենեակներու եւ համալսարաններու մէջ եւ ուր անկախ խորհրդանշականօրէն աշխարհիկ կարգերու դէմ կեցուածք կը նկատուի:

Ներումի ջնջումին որոշումը յարգուած է հրապարակաւ բնագոտուներէն, թէ իշխող կուսակցութիւնը, որ իսլամական արժաններ ունի, կը վտանգէ կրօնական ծայրայեղականութեան դէմ Թուրքիոյ պայքարը, ինչպէս նաեւ՝ բանակին կողմէ խիստ զգուշացումի մը:

Բանակին ընդհանուր հրամանատարը՝ Հիւսի իօզքը, այս ամսուն սկիզբը կառավարութիւնը ամբաստանած էր ծայրայեղական ուժերը քաջալերելու յանցանքով:

ԹՈՒՐԹ ԶԻՆՈՒՌ ՄԸ ԿԸ ՍՊԱՆՈՒԻ

Միւս կողմէ, երկրին հարաբերելեան գոտիին մէջ Թուրք զինուոր մը սպանուած է եւ 5 ուրիշներ վիրաւորուած, Հինգշաբթի օր, երբ ապահովութեան ուժեր բախում ունեցած են քիւրտ ըմբոստներու հետ: Դէպքը, որ մահացու առաջինն էր Հոկտեմբերէն ի վեր, սեղի ունեցած է երբ ուժեր ՔԱԿի զինեայնորու հանդիպած են՝ իրենց շրջապատութեան ընթացքին: Տեղական թրքական աղբիւրներ յայտնած են, թէ ապահովական գործողութիւնը կը շարունակուի:

ցուց քուէարկողները, երբ յայտարարեց, թէ որեւէ պարագայի տակ մաս պիտի չկազմէ կառավարական ընկերակցութեան մը, որուն վարչապետն է Շարոն: Ըստ հարցախոյզներու արդիւնքներուն, իսրայէլացիներուն 57,5 առ հարիւրը չի հաւատար Միցնայի այս յայտարարութեան:

ՊԱՂԵՍԻՆԵԱՆ ԾՐԱՆԵՐՈՒՆ ՄԵՋ ՉԵՐԲԱԿԱԼՈՒԹԻՒՆՆԵՐ

Իսրայէլեան բանակը 13 բնակարաններ քանդեց Կազախի եւ Այսրյորդանանի մէջ, ուր ձեռքարկեց նաեւ 11 պաղեստինցիներ, յայտնեցին պաղեստինեան ապահովութեան աղբիւրներ:

Կազախի Ռաֆազ գաղթականներն Պրազիլ թաղամասին մէջ իսրայէլեան բանակին պուլտոզըները հիմնադրուած քանդեցին հինգ բնակարաններ: Քանդուածի գործողութիւնը վնաս պատճառեց նաեւ մօտակայ ինը բնակարաններու: Կազախի հիւսիսային Պէյթ Հանունէն քաղաքին մէջ իսրայէլեան ուժերը քանդեցին երեք բնակարաններ: Պէյթ Հանուն յաճախ հրթիռներ կ'արձակուին իսրայէլեան շրջաններուն վրայ:

Այսրյորդանանի մէջ եւս գործողութիւնները կը շարունակուին: Հեպոնի մէջ, բանակը ռմբակոծեց բնակարան պաղեստինցիի մը, որ Ապրիլին սպանուած էր Երուսաղէմի մէջ կատարուած անձնասպանական գործողութեան մը ընթացքին: Իսկ Տահր Մալէհի մէջ, Ժնիին մօտ, երեք բնակարաններ քանդուեցան, յայտնեցին պաղեստինեան աղբիւրներ:

Իսրայէլեան բանակը կ'ըսէ, որ բոլոր բնակարանները կը պատկանին ծայրայեղական պաղեստինցիներու, որոնք մասնակցած են իսրայէլացիներուն դէմ յարձակումներու: Բեթլեհէմի մէջ, բանակը ձեռքարկեց տասնմէկ պաղեստինցիներ, որոնցմէ երկուքը Համասի անդամ են:

Միւս կողմէ, Միացեալ Նահանգներ «դրական ու չինիչ» որակեցին պաղեստինեան բարեկարգումներուն մասին Արտտին մէջ կայացած երկօրեայ խորհրդակցութիւնը: Արտտին գործող նախարարութեան բանբեր Ռիչըրտ Պաուլը ըսաւ, որ Ուաշինգթըն պիտի շարունակէ օժանդակել պաղեստինցիներուն, որպէսզի բարեկարգեն իրենց հաստատութիւնները:

Միջին Եւրոպայի կայացումը, Ուաշինգթըն վստահ էր անոր ներկայացուցիչ արժէքէն, յատկապէս, երբ Իսրայէլ արգիլեց պաղեստինեան պատուիրակութեան մասնակցութիւնը: Խորհրդակցութիւնը աւարտէն ետք սակայն, Ուաշինգթըն յայտարարեց, որ Լոնտոնի հանդիպումը պիտի նպաստէ բարեկարգումի գործողութեան, որ հիմնական պահանջ է պաղեստինեան անկախ պետութեան հաստատման ճամբուն վրայ:

(ԱՅՖ)

ՃՈՆ ԿԱՐԱՆԿ Կ'ԱՄՐԱՍՏԱՆԷ ԽԱՐԹՈՒՄԻ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ

ՆԱՅՐՈՊԻ, 16 (ԱՅՖ).— Սուտանի հարաւային ընդդիմադիր ուժերուն հրամանատարը՝ ճոն Կարանկ չինգազարթօր իսրայէլի կառավարութիւնը ամբաստանեց զինադուր խախտելու եւ խաղաղութեան բանակցութիւնները ձգձգելու յանցանքով: Փորձարարի խախտելու համար միջազգային ընտանիքին յանձնարարութիւնը Սուտանի խաղաղութեան գործընթացին հանդէպ:

Խարթումի իշխանութիւններուն եւ ընդդիմադիր ուժերուն միջեւ Չորեքշաբթի օր Նայրոպի մէջ սկսելիք բանակցութիւնները առկայութեամբ, երբ կառավարու-

ՊԱՂՏԱՏ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԳՈՐԾԱԿՅՈՒԹԻՒՆ...

Շարունակուած Ա. ԷջԵԸ

լուծել խաղաղ միջոցներով եւ խուսափել պատերազմի ընտանացին: Սոլանա դիտել տուաւ, որ բաւարար չէ, որ Սատում չհիւսէին քանիչ գոց դռները. պահանջուած լուծելու գործակցութիւն է:

Պարատի, որ Մուկուս կը գտնուի, դիտել տուաւ, որ քննութիւնները տակաւին քանի մը ամսուան կը կարօտին: Պարատի ըսաւ, որ ութ շաբթուան պայմանաժամը բաւարար չէ եպրակացութեան յանգելու համար: Ան ասելցուց, որ մինչ այդ Պաղտատ պետք է փաստաթուղթերով եւ շօշափելի փաստերով հաստատէ, թէ հաւասարական քանդումի պէնթերու ծրագիրն ինչ է:

թանով երկ Պաղտատի մէջ տեսակցութիւններ ունեցաւ արտաքին գործոց նախարար Նաժի Սապրիի եւ բարձրատարնաւ այլ պաշտօնատարներու հետ: Երկու պաշտօնատարները քննարկեցին վերջին իրադարձութիւնները, պէնթ քննութիւններն ու երկկողմանի գործակցութիւնը:

Միւս կողմէ, իրաքցի բարձրաստիճան պաշտօնատար մը յայտնեց, որ քննիչներուն կողմէ յայտնաբերուած քիմիական իրթիմներու պարապ գուլիները ոչ մէկ առնչութիւն ունին հաւաքական քանդումի պէնթերու ծրագիրին հետ:

ՍՈՒՐԻԱ ԿԸ ԶԳՈՒՇԱՅՆ ԴԱՏԱՐԱԶՄԻ ՄԸ ԸՏԵՏԻԱՆՔՆԵՐԸ

Ռուսիոյ արտաքին գործոց նախարար Իկոր Իվանով, որուն հետ տեսակցութիւն ունեցաւ Պարատի, յայտարարեց սակայն, որ ամերիկեան կարգ մը շրջանակներ պօրտուր ճնշում կը բանեցընեն Իրաքի մէջ գործող ՄԱԿի քննիչներուն վրայ, որպէսզի անոնք հասցնեն եպրակացութեան իրենց քննութիւնները: Իվանով ասելցուց, որ ամուլի եւ այլ միջոցներով բանեցուած ճնշումները կը խախտեն Ապստոլութեան Խորհուրդի թիւ 1441 որոշումին սկզբունքները: Ան շեշտեց նաեւ, որ Մուկուս կը հաւատայ, թէ քննիչները պետք է գործեն անկախ եւ Ուաշինգթընի հրահանգներ չտանան:

Սուրիա երկ պուշացուց Միացեալ Նահանգները, դիտել տալով, որ Իրաքի մէջ պատերազմի մը պարագային արաբական աշխարհին տարածքները պիտի բազմաձայն ծայրայեղական իսլամական շարժումները, ՄԱԿի քննիչներուն վրայ, որպէսզի անոնք հասցնեն եպրակացութեան իրենց քննութիւնները: Իվանով ասելցուց, որ ամուլի եւ այլ միջոցներով բանեցուած ճնշումները կը խախտեն Ապստոլութեան Խորհուրդի թիւ 1441 որոշումին սկզբունքները: Ան շեշտեց նաեւ, որ Մուկուս կը հաւատայ, թէ քննիչները պետք է գործեն անկախ եւ Ուաշինգթընի հրահանգներ չտանան:

Ռուսիոյ արտաքին գործոց փոխ նախարար Ալեքսանդր Սալ-

րաքեց, թէ լառաջիկայ շաբթուան մէջ հանդիպումի մը կը հրաւիրէ շրջանային հինգ երկիրներ՝ Եգիպտոս, Յորդանան, Միւսուական Արաբիա, Սուրիա եւ Իրան, խորհրդակցելու համար Իրաք - Միացեալ Նահանգներ ձախտումը խաղաղութեամբ լուծելու կարելիութիւններուն մասին: Վարչապետ Ապտալլա Կիւ վերջերս այցելած էր իշտեալ երկիրները նոյն հարցը արծարծելու համար: ՕԹԱՆի անդամ Թուրքիա կը մերժէ Իրաքի դէմ պատերազմ մը, որմէ պիտի տուժէ տնտեսապէս եւ քաղաքականօրէն:

Եգիպտոսի նախագահ Հիւսի Մուսաւրաք քանի մը օր առաջ ըսած էր, թէ Անգարա եւ արաբական երկիրներ կը փորձեն գտնել լուծում մը, որ ընդունելի ըլլայ Իրաքի եւ Միացեալ Նահանգներուն համար:

Դիւանագիտական այլ աղբիւրներու համաձայն, Թուրքիա եւ շրջանային արաբական երկիրները կ'աշխատին համուլի իրադարձութեան համար Սատում չհիւսէնը, որ կամուր պարտի դիմէ խուսափելու համար պատերազմի մը: Անգարա եւ «դրացի» արաբները կը հերքեն, որ նման ծրագիր մը կը մշակեն:

● ԵՒՐ ՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ մէջ Միացեալ Նահանգներու դեսպան Ռոքուել Շնապրլ ըսաւ, որ Ուաշինգթըն իրաւունք ունի պատերազմի մը ձեռնարկելու Սատում չհիւսէնի դէմ, կըր նմանցուց Սուրիոյ չինգութիւնը:

● ՕԹԱՆ տակաւին որոշում չէ տուած Իրաքի դէմ պատերազմի մը պարագային ամերիկեան ուժերուն օժանդակելու պահանջին մասին: ՕԹԱՆի ընդհանուր քարտուղար ձորձ Ռապրոսը ըսաւ, որ Ուաշինգթըն ինդրած է օժանդակութիւնը, կըր քննարկել ետք, որոշում պիտի տրուի: (ԱՅՖ)

ԱՅԿԻԼ AFHIL

ԲԺՇԿԱԿԱՆ ՏԵՃՅԻՆ ՍԱՐՔԵՐՈՒ ՄՊԱՍԱՐԿՈՒԹԻՒՆ



- Over Bed Table
- All Kinds Of Oxygen
- We Also Provide
- Laboratory service.
- Physiotherapist
- Nurses Aids
- P.T.S. (AMBULANCE)

ՅՈՒՑԱՍԱՐԿ՝ «ԱՐԻՆ» ՍԵՆՈՐԸ ԳՐԱՍԵՆԵԱԿ՝ ԱՅԿԻԼ, ԱՅԵՏԻ ԶԵԼԵ, Բ. ՅԱՐԿ (ԵՆ. (01) 242553/7

NO MATTER WHAT YOU NEED... OR WHERE YOU NEED.



ԻՆՉ ԿԸ ԳՐԵՆ ԼԻԲԱՆԱՆԵԱՆ...

Շարունակուած 3րդ ԷջԵԸ

«Տիար» նշած է, թէ Արաֆաթ կը յայտարարէ. «Մեր ժողովուրդին դէմ պատերազմը կը շարունակուի 28 ամիսէ ի վեր»: Պեճիքա կը յայտարարէ. «Շարոնի դատաւարութիւնը կրնայ սկսիլ նախքան ամառը»:

Թեհրան կը հաստատեն, թէ նախագահ Աստի Թեհրան այցելութեան մասին լրատուական աղբիւրներու լուրերը ստոյգ չեն: «Քիֆաի Արապի»-ի համաձայն, նախագահ Աստ 2 Մարտը կը յայտարարէ խորհրդարանական ընտրութիւններու կայացման թուական: Խաթեմի յայտարարեց, թէ Աստի Իրան այցելութիւնը ստոյգ չէր:

Ըստ Թեհրանի, Հիւսիսային Քորէա կը յայտարարէ, թէ Պուշի նախաձեռնութիւնը դերասանութիւն մըն է իսրայէլի համար հանրային կարծիքը: «Սաֆիր» գրած է, թէ Ուաշինգթըն հարց կ'ուտայ, թէ Իսրայէլին կը շահի Հեպոնի 2 համալսարաններու փակումը: Օրաթերթերը նաեւ լուսարձակի տակաւն են Տեղանի մէջ նախագահ Լաիւտի կատարած մարկպահնուորական համալիրի բացումը:

ԺՎԱՄԱՆԱԿԻՆ... Շարունակուած՝ 4րդ ԷջԵԸ


Հազար տարիներ են անցեր, ու չէ մեռած ոգին Նաբեկացիի, շունչը Սուրբին կը սաւառնի հոգիներուն մէջ մայրերուն, որոնք գիտեն արժէքը սուրբ, հայածնունդ հոգիներուն:

Մայրեր հայոց, նոր օրերու. Նաբեկացիին ձեռք կը կանչէ, եղջէք արթուն, նոր շունչ սուէք սերունդներուն մէջ նորոգին, որ միշտ հնչէ «ի խորք սրտի», տաղերը Սուրբ Նաբեկացիին, որ շնորհքը ինչէ օճակներուն մեր հայրենի, ու հաւատքը անմեկնելի թող երկարի ժամանակին հետ յաւերժին:

Մայրեր հայոց, համբուրեցէք Մատեանը սուրբ, ու գայն զրէք բարձրուն տակ ձեր երազին, որ մեղմանան տաքնայ ու վիշտ, մորմոք ու ցաւ:

Յոյս ու հաւատք ձեռք չեն խաբեր, կը ծնին՝ սէր, մայրեր, մայրեր: Ու լսեցէք պատգամը սուրբ պսակաղիր. «Աճեցէք եւ բազմացա՛ր», մի՛ հեռանա՛ք ծոցէն աճուի մեր հայրենուն: Յայնժամ կ'օրհնէ Նաբեկացիին, մեզ բոլորս մանուկ ու մայր, փոքր ու մեծ: Նաբեկացիին «Խօսքն» ու Տարին ըլլան հնչուն, Տարօն աշխարհէն ձեռք հազար ողբոյն...

ՊՁՏԻԿ-ՄՁՏԻԿ



Մեր ՅԱՐՈՒԱՆ ԹԻՈՂ
Ուրբաթ, 21 Փետրուար
2003

«ԱՁԴԱԿ»Ի

ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ՅԱԻԵԼՈՒԱԾ

Ա. ՏԱՐԻ

Թիւ 10

ՅՈՒՆՈՒԱՐ 2003

bezdig_mezdig@hotmail.com

ՄԱՊԽԱՆՔՆԵՐԸ ԹՈՂ ԻՐԱԿԱՆԱՆԱՆ

Յունուարի առաջին օրերուն շատ-շատեր նոր որոշումներ կու տան եւ օրէնքներ կը դնեն իրենց բնաւորութիւնը բարելայելու եւ նոր թափով աշխատելու համար: Դժբախտաբար, սակայն, այդ որոշումներուն մեծ մասը կաղանդի վարդերուն հետ կ'անհետանան:

Նոր թափով ու խանդավառութեամբ աշխատելու ոսկի օրէնքներէն է կազմակերպուած ըլլալը: Մեր միտքը, մարմինը եւ հոգին կը կազմեն մէկ ամբողջութիւն: Եթէ մեր մարմինը լաւ խնամենք, մեր միտքը առողջ ու արթուն կ'ըլլայ. մեր գործերուն մէջ կը յաջողինք: Իսկ յաջողող անձին հոգին կրնայ ուրախ չըլլալ:


Ուրեմն, ամէն ինչ իր ժամանակին ու պէտք եղածին պէս կատարելով է, որ կրնանք իրականացնել մեր մաղթանքները եւ ունենալ յաջող տարի մը:

ՄԵՐ ԽՈՍՏՈՒՄԻՆ ՏԵՐԸ ԸԼԼԱՆՔ

2003 Նոր Տարուան առաջին կէտը ապրած ենք արդէն: Չեմ գիտեր, թէ դուք ինչպէս ապրեցաք, սակայն ես իւրաքանչիւր խօսքիս, շարժումեւիս եւ գործիս նկատմամբ պզուշ էի եւ կարելիս կ'ընէի չսխալելու:

Սխալ չհասկնա՛ք: Ջգուշ էի, ոչ թէ որովհետեւ կը վախճամ Պէն Լատէնէն կամ նախագահ Պուշէն եւ կամ Սատտամ Բիւսէյնէն, այլ որովհետեւ այս անձնաւորութիւններէն աւելի մեծ անձ մը խոստում մը տուած էի:

31 Դեկտեմբերի կէս գիշերին, երբ 2002ը ինձի մնաս բարով ըսաւ ու գնաց, ես դիմաւորեցի 2003ը եւ կաղանդ պապան: Կաղանդ Պապան ինձի համար յարգանքի արժանի եւ մեծ անձ մըն է: Ան 31 Դեկտեմբերի գիշերը, իր ձեռքի վանդակը հնչեցնելով, մեր տունը մտաւ: Անուշ խօսքերով ինձի ստիպեց, որ երգեմ ու արտասանեմ: Կատարեցի ըսածը: Բաւնեցաւ ծայնս ալ, առողջանութիւնս ալ: Ըսաւ, որ մեծնալէս ետք կրնամ երգչուհի կամ ասմունքող ըլլալ: Ուրախացայ եւ սպասեցի: Կը սպասէի նուէրս: Կաղանդ Պապան անմիջապէս չտուաւ նուէրս: Ան ըսաւ, որ նուէրներս ստանա-



Իրակ Թարգմանեան
(Ե. դասարան Ալգային Քառասնից Մանկանց Վարժարան)

լու համար ուրիշ պայմաններ ունի: Եւ սկսաւ երկար բարակ թուել:

1) Գիշերները պէտք է կանուխ քնանաս, որպէսզի կանուխ արթննաս՝ առողջ մարմին ու արթուն միտք ունենալու համար:

2) Ծնողներ տարիքով քեզմէ մեծ են, ուրեմն պէտք է լաւ մտիկ ընես անոնց ըսածները: Իսկ եթէ կ'ուզես քու ուզածդ եւ մտածածդ իրենց հասկցնել, առանց ջղայնանալու եւ հանդարտօրէն պէտք է ըսես իրենց:

3) Դասերդ պատրաստելու ատեն պէտք է կեդրոնանաս միայն դասին վրայ: Չմտածես համակարգիչին, հեռատեսիլին եւ խաղին մասին: Անոնցմով յետոյ ալ կրնաս վրադիլ:

4) Դասերդ առանց խաղալու պէտք է սորվիս, որպէսզի շուտ վերջացնես եւ ժամանակ ունենաս կարենաս երգի, պարի, երաժշտութեան կամ մարզանքի ալ հետեւելու:

5) Կոկիկ ու դասաւորուած պէտք է ըլլաս: Գիրքերդ, տետրակներդ, համապզեստդ, գիրդ,

խաղալիքներդ պէտք է խնամքով գործածես:

6) Քու տարիքիդ յարմար աշխատանքներով մօրդ կամ հօրդ պէտք է օգնես:

7) Ազգականներուդ, դասընկերներուդ եւ ընկեր-ընկերուհիներուդ հետ կիրթ ու քաղաքավար պէտք է ըլլաս: Անոնց հետ պոռալով մի՛ խօսիր, ոչ ալ՝ հրել - հրմշտկելով վարուէ անոնց հետ:

Կաղանդ Պապային երեսին ապշած նայեցայ: «Այս մարդը նուէրս պիտի չտայ ինձի, անոր համար այսքան երկար պահանջներ ներկայացուց», մտածեցի: Յետոյ խորունկ շունչ մը քաշեցի, վերյիջեցի պայմանները: «Գիտես, շատ ալ դժուար չէ գործադրելը», ըսի եւ ինձի, «Նոր Տարուան հետ ես վիս ալ կը նորոգեմ»: Կաղանդ Պապային վիպին փաթթուեցայ եւ «Անկեղծօրէն կը խոստանամ» ըսի:

Նուէրս ստացայ: Արդէն սկսած եմ աշխատանքի եւ 12 ամիս պիտի գործադրեմ խոստացածս:

Մեր
Պապան

9. դասարան

Ալգային
Քառասնից
Մանկանց
Վարժարան



ملحق أزياءك



2002 ՏԱՐԻՆ

ԱՅՈՒՆՈՐԻ

- Քուէարկողներու 81.96 առ հարիւր ձայնով Ֆրանսայի նախագահ ժաք Ճիրաք նախագահ վերընտրուեցաւ:

- Միացեալ Նահանգներու նախագահ Ճորճ Պուշ սպառնաց յարձակիլ Իրաքի վրայ: Իրաքի նախագահ Սատտամ հիւսէյն համաձայնեցաւ ընդունիլ ՄԱԿի քննիչները, որոնք պիտի ստուգեն Իրաքի վէճի պահեստները:



- Մայիս-Յունիսին Քորէայի եւ Ճափոնի մէջ տեղի ունեցաւ ֆութպոլի աշխարհի 17րդ ախոյեանութիւնը: Պրազիլ 5րդ անգամ ըլլալով խլեց ախոյեանութեան բաժակը:

- Չեչէն վինեալներ յարձակեցան Մոսկուայի թատերասրահներէն մէկուն վրայ եւ պատանդ բռնեցին 750 հոգի: Աուստրոյ ոստիկանութիւնը յաջողեցաւ վերջ տալ ահաբեկչական գործողութեան՝ սպաննելով յարձակողները եւ պատճառելով 47 վոհ:

- Անգլիոյ էլիզապէթ թագուհին կորսնցուց իր մայրը եւ քոյրը: Ան նաեւ տօնակատարեց իր թագադրութեան ոսկեայ յոբելեանը (50 տարի):

- Ֆորմիլա 1ի աստղ Մայքըլ Շումպիրը հինգերորդ անգամ ըլլալով հանդիսացաւ ախոյեան: Ան Ֆորմիլա 1ի պատմութեան մէջ երկրորդ մարտիկն է (Ֆանկիոյի կողքին), որ այսքան մեծ թիւով ախոյեանութեան կը տիրանայ:

ԼԻՐԱՆԱՆ

- Մարտին Պէյրութի մէջ գումարուեցաւ Արաբական 14րդ գերաստիճանը՝ 2000ին հարաւային Լիբանանի ազատագրութեան առիթով:



- Յունիսին Մեթնի մէջ տեղի ունեցան երեսփոխանական մասնակի ընտրութիւններ: Երկար անորոշութենէ ետք երեսփոխան

հռչակուեցաւ Պասսան Մուխայպէր:

- Գոկտեմբերին Պէյրութի մէջ գումարուեցաւ Ֆրանսախօս երկիրներու 19րդ գերաստիճանը: Այս առիթով Լիբանան հիւրընկալեց ֆրանսախօս երկիրներու նախագահներ, վարչապետներ եւ պաշտօնական անձնաւորութիւններ:



«ՊՁՏԻԿ-ՄՁՏԻԿ»

- Ապրիլին հրատարակուեցաւ «Ազդակ»ի մանկապատանեկան ամսական յաւելուած «Պզտիկ-Մզտիկ»ի առաջին թիւը:

- 15 Դեկտեմբերին տեղի ունեցաւ «Պզտիկ-Մզտիկ»-ընթերցողներ առաջին հանդիպումը, երբ կազմակերպուեցաւ «Անսխալ գրեմք» ուղղագրութեան մրցումը: Նոյն օրը տեղի ունեցաւ նաեւ «Պզտիկ-Մզտիկ»ի հասած աշակերտական գծագրութիւններու ցուցահանդէս:

ԲԱՄԱԶԳԱՅԻՆԻ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ՄԻԱԽՈՐՆԵՐԸ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՆ

«ՈՒՐԱԽ ԿԱՊԱՆԴԻ ՆՈՒՔՐ ԲՈԼՈՐԻՆ»



Վերջին տարիներուն Կաղանդի շրջանին սովորութիւն դարձած է, որ համապայինի մանկապատանեկան «Գայիանէ» պարախումբը, «Կարկաչ» երգչախումբը եւ «Արեգ» թատերախումբը մեկի հրամցընեն պարի, երգի եւ թատրոնի ներկայացումներ:

Այս տարուան ամանորեայ ներկայացումն էր «Ուրախ Կաղանդի նուէր բոլորին»ը, որուն ընթացքին աւելի քան հարիւր մանուկներ ու պատանիներ հանդիսատեսներուն տուին երգերէ ու պարերէ բաղկացած նուէր մը: Բեմին վրայ էին Կաղանդ Պապան, իր օգնական թվուկները եւ մանկական հեքիաթներու կերպարներ, ինչպէս՝ Ունի Տը Փուհ արջուկը, Արեւիկը, Թոմս ու Ճերին: Անոնք ներկայացուցին հանդէսը, որուն աւարտին բեմ հրաւիրեցին հանդիսատեսներէն քանի մը մանուկներ ու պատանիներ՝ անոնց առիթ տալով, որ իրենք եւս երգեն, արտասանեն ու նուէր ստանան:

Գնահատելի է այս պատանիներուն աշխատանքը: Անոնք կը զոհեն իրենց ազատ ժամերէն՝ ներկայացնելու համար Կաղանդի նուէր մը: Անոնց բեմի վրայ գտնուելու երեւոյթը կը քաջալերէ նաեւ, որ այլ պատանիներ եւս մասնակցին «Արեգ»ի, «Կարկաչ»ի եւ կամ «Գայիանէ»ի աշխատանքներուն՝ յայտնաբերելով իրենց ձիրքերը:



ԱՐԴԻՒՆԱԽԵՏ ՍՈՐՎԷ՛

Կաղանդի եւ Ս. Ծնունդի արձակուրդները վերջացան մօտ առենձն ձեզմէ շատեր կիսամեայ քննութիւններ գրաւոր պիտի ունենան եւ, որպէսզի քննութիւններն ու գրաւորները մղձաւանջի չվերաճուին, կան պայմաններ եւ օրէնքներ, որոնք կ'օգնեն աշակերտին աւելի լաւ եւ դիւրին կերպով սորվելու, սորվածը չմոռնալու եւ լաւ արդիւնքներ արձանագրելու:

●Ուշադրութեամբ կարդա՛ վարի տողերը եւ դուն ալ «Պատիկ - Մատիկ»ին նման կը յաջողիս, ուրախ կ'ըլլաս եւ ինչեր կրնաս ընել ապատ ժամերուդ...

●Իւրաքանչիւր դասապահի ընթացքին կեդրոնացած հետեւէ բացատրութիւններուն, նօթագրութեան տետրակիդ մէջ արձանագրէ նիւթը, որուն մասին խօսեցաք դասարանը:

●Տունը յաջորդ օրուան դասերդ պատրաստելէ առաջ նոյն օրուան դասերը եւ աշխատանքները վերաքաղ ըրէ եւ ամփոփէ:

●Աշխատելու համար տան մէջ խաղաղ եւ լուսաւոր տեղ մը ընտրէ: Եթէ քոյրիկ - եղբայրներով նոյն սենեակին մէջ դաս կը սորվիք, իրենցմէ խնդրէ, որ կարելի եղածին չափ ձայն չհանեն:

●Կանոնաւոր ընդմիջումներով աշխատէ,




օրինակ՝ 30 վայրկեան աշխատանք, 10 վայրկեան դադար: Այսպիսով, թէ դասերդ լաւ կը պատրաստես եւ թէ ալ կը հանգչիս:

●Մտածէ, թէ սորված նիւթերդ քեզի օգտակար պիտի ըլլան:


●Նոր սորված նիւթդ փորձէ կապել անցեալին սորված մէկ նիւթիդ:

●Սորվածդ փորձէ բացատրել ընտանիքիդ անդամներուն:

●Սորվածդ քու բառերովդ գրէ. վերնագիրներով եւ ենթաբաժանումներով խմբէ՛...




ԱՌՈՂՋ ՄԻՏՔ՝ ԱՌՈՂՋ ՄԱՐՄՆԻ ՄԷՋ



նութիւնը կը պակսի:

- Ամէն առտու պատուհանին առջեւ կամ պատշգամը մաքուր օդ շնչէ: Մաքուր օդին մէջ գտնուող թթուածինը կը բարելաւ արեան շրջագալութիւնը, մարմնիդ գործարաններուն աշխատանքը: Իսկ ամէնէն կարելորդ՝ թթուածինը կ'օգնէ, որ մեր ուղեղը լաւ աշխատի:


- Մարզանք ըրէ՛: Եթէ տունը ժամանակ կամ միջոց չունիս, օգտուէ՛ դպրոցի մարզանքի պահերէն: Մարզանքը կը փորայնէ մեր մարմինը եւ կ'աւելցնէ հիւանդութիւններէ պաշտպանուելու անոր դիմադրողակա-



Պըպզ, ցուրտ է, կը մսիմ...
հափշիւ, արդէն հարբուխ եմ, պէտք է անկողին մնամ: Ստիպուած՝ դպրոցէն պիտի բացակայիմ եւ դասերէս ետ պիտի մնամ: Ինչ ընեմ՝ չեմ ուզեր հիւանդանալ:

Մեզմէ շատերու հետ կը պատահի այսպէս: Սակայն գիտէ՞ք, թէ կան առողջապահական փոքր գաղտնիքներ, որոնք կ'օգնեն մեզի ամբողջ ձմրան ընթացքին առողջ ու կայտառ մնալու:

- Առատ ջուր խմէ՛: Զուրը կը մաքրէ մեր կոկորդին մէջ հաստատուած մանրէները, եւ կոկորդի բորբոքում ունենալու հաւանակա-



նութիւնը: Ահաւասիկ՝ հիւանդ չըլլալու ուրիշ գաղտնիք մը:

- Սննդարար ճաշեր կեր: Կարելորութիւն տուր նախաճաշին, զբօսանքներուն անպայման մէկ-երկու պտուղ կեր: Ծաշացուցակէ անպակաս թող ըլլան բանջարեղէնները եւ ապուրները: Իսկ ամէնէն կարելորդ՝ կրցածիդ չափ հեռու մնայ անուշեղէններէ եւ տուրմէ:

- Միշտ տաքուկ հագուստներ հագիր: Զմրան ընթացքին երբեմն կը պատահի, որ օդը տաքնայ: Զգու՛շ, չխաբուիս տաքուկ արեւն: Տակաւին ձմեռ ենք:



ՍԱՌՈՅՅԷ ՃԱՏՐՈՒԱՆՆԵՐ



Անցնող շաբաթներուն երոպական մեծ թիւով երկիրներու մէջ օդը շատ պօրաւոր կերպով ցրտեց: Կարգ մը երկիրներու օդին ջերմաստիճանը հասաւ մինչեւ – 58ի:

Վերջին 15 տարիներուն ամէնէն աւելի ցուրտ ամիսը երոպայի տարածքին պատճառեց աղէտներ: Ռուսիոյ եւ Լեհաստանի մէջ հարիւրաւոր մարդիկ մահացան ցուրտին պատճառով: Ջոհեր արձանագրուեցան նաեւ այլ երկիրներու մէջ, նաեւրը անշարժացան գետերու եւ ձովերու սահաճ ջուրերուն մէջ:

Սաստիկ ցուրտը, իր գործած աւերներուն կողքին, լայն տարածութիւններ պատեց ձիւնի ճերմակ սաւանով:

Երոպական մայրաքաղաքներուն շատրուանները վերածուեցան սառոյցէ քանդակներու: Նկարին մէջ կը տեսնենք Փարիզի Պանթէոնին առջեւ գտնուող շատրուանին սառոյցէ քանդակը:

«ՉԻՓՍ»Ը ԵՒ ԱՌՈՂՋՈՒԹԻՒՆԸ

Անգլիոյ տարրալուծարաններէն մէկուն մէջ փաստուած է, որ «չիփս»ը քաղցկեղ պատճառող նիւթ մըն է, նմանապէս եւ՝ տապկուած գետնախընձորը, հետեւաբար պոլիշայէք...




ՄԱՐԴԷ, ՈՐ ԽԱԾԱԻ ԿՈԿՈՐԴԻՆՈՍԸ

Ձմեռ է եւ աւելի յարմար է ձմեռնային նիւթերու մասին խօսիլ, չմոռնանք, որ երկրագունդին վրայ կան շրջաններ, ուր հիմա եղանակը տաք եւ հաճելի է, կամ ամբողջ տարուան ընթացքին բարեխառն կլիմայ ունին: Ահա այդպիսի շրջան մըն է Մալաուին (Կեդրոնական Ափրիկէ), ուր հետաքրքրական արկածախնդրութիւն մը պատահած է: 43 տարեկան Պոսկօ Չաուինկա կը լողար Մալաուի լիճին մէջ, երբ կոկորդիլոս մը իր ակռաներով «կ'աքցանէ» խեղճ մարդուն երկու արմուկները, Պոսկօ կ'որոշէ պայքարիլ եւ... կը խաճնէ կոկորդիլոսին քիթը: Կոկորդիլոսը, չդիմանալով ցաւին, կը ձգէ իր պոհը եւ կը փախչի: Ինքուսը կը յաջողի հասնիլ ճովեպերք:

ՄԱՐԴՈՒՆ ՆՈՐ ԲԱՐԵԿԱՄԸ՝ ՄԱՐԴԱՄԵՔԵՆԱՅ ԱՍԻՄՕՆ

Վերջերս տեղի ունեցաւ մարդու նոր բարեկամին՝ մարդամեքենայ Ասիմոյի ցուցադրութիւնը: «*հոնտա Մոթորս*» ընկերութեան կողմէ պատրաստուած այս մարդամեքենան ինքզինք ցուցադրեց Մալեպիոյ մայրաքաղաք Քուալա Լամփուրի Ազգային գիտութիւններու կեդրոնին մէջ: Ջայն դիտելու եկած էին մեծ թիւով մարդիկ, որոնց շարքին՝ երեխաներ:



Մօտ օրէն Ասիմոն պիտի վաճառուի շուկաներուն մէջ:

ՃՈՒԷՏԵՐԷՆ ԽՕՍԻՆՔ

Կ'ուպէք հեռու մնալ բժիշկներէ... Փորձեցէ՛ք խօսիլ շուէտերէն... Ուսումնասիրութիւններ ցոյց տուած են, որ այն ֆինլանտացիները, որոնք կը գործածեն շուէտերէն, 25 առ հարիւրով նուազ կը հիւանդանան, քան անոնք, որոնք կը խօսին ֆինլանտերէն: Ի՞նչ է գաղտնիքը... Պատճառը լեզուն չէ, այլ ապրելակերպը: Ճուէտերէն խօսողները կ'ապրին գիւղական շրջաններու մէջ, հեռու՝ ճուխէ ու մուխէ: Միւս կողմէ, քաղաքը ապրողները, որոնք կը խօսին ֆինլանտերէն, ենթակայ են գործարաններէ եւ այլ վայրերէ արտանետուող տարբեր տեսակի ապականութիւններու...

Ձեր գրութիւնները կամ նամակները կրնաք ուղարկել՝ bezdlg_mezdlg@hotmail.com կամ յանձնել՝ «ՊՁՏԻԿ-ԱՁՏԻԿ»ի խմբագրութեան, «ԱՁԴԱԿ» «Ճաղպոյեան» կեդրոն



ԱՐՋԵՐՈՒ ՄԱՍԻՆ...



ՄՊԻՏԱԿ ԿԱՄ ԲԵՆԵՌԱՅԻՆ ԱՐՋ

Բակառակ իր հսկայության բեռնային արջը կրնայ լողալ ժամական 5 քմ. արագությամբ, վազել մարդէն աւելի արագ, սահիլ ձիւնին կամ սառույցին վրայ: Բնութիւնը այս «մարպիկ»ը առաւելութիւններով օժտած է:

Խթաթերուն մէկ մասը մաշկ ունի լողալու համար, թաթերուն տակը մազուտ է, որպէսզի սառցակոյտերուն վրայ չսահի. քիթին ճայրը, աչքերուն եզերքը եւ շրթունքները սեւ են, մուշտակը հաստ, պոչն ու ականջները պլտիկ՝ ցուրտէն պաշտպանուելու համար, մորթը՝ իւղոտ, որ չթրջուի:

Սպիտակ արջերը կ'ապրին փոքր խումբերով (3 - 4 հատ): Ձագերը կը ծնին ցուրտ եղանակին:

Սպիտակ արջը գլխաւորաբար կը սնանի ճովային անասուններով եւ ձուկերով:

ԳՈՐԾ ԿԱՄ ՍՐՃԱԳՈՅՆ ԱՐՋ

Գորշ արջը միակ գիշատիչն է, որ երկար

ժամանակ կրնայ սնանիլ միայն բոյսերով: Ան կ'ուտէ նաեւ մրջիւններ, փոքր անասուններ, թռչուններ, ջրային անասուններ, ձուկեր: Ծատ կը սիրէ մեղր: Մեծ արջը կրնայ կշռել մինչեւ 300 քկ.: Ալասքայի մէջ կայ գորշ արջի տեսակ մը (Քոտիաք), որ կրնայ կշռել մինչեւ մէկ թոն: Ան երկրի վրայ ամենամեծ մսակերն է եւ կը սնանի ձուկերով:

Սրճագոյն արջը եւրոպայէն անհետացած է, բայց տակաւին գոյութիւն ունի Կեդրոնական Ասիոյ անտառներուն մէջ, մինչեւ Ճափոն:

Արջերն ալ, այլ անասուններու պէս, կը նախապահ, թէ մօտակայ ճմեռը ինչպէս պիտի ըլլայ, եւ երբ սնունդ գտնելը կը դժուարանայ, կը մտնեն իրենց որջը եւ խոր քուն կը մտնեն: Ձմրան քունի ընթացքին կ'ապրին առանց սնունդի. կը ձճեն իրենց թաթը եւ կը բաւարարուին թաթին մէջ կուտակուած ճարպով:

Արջին տեսողութիւնը տկար է, բայց լսո-

ղութիւնը եւ հոտառութիւնը՝ զօրաւոր:

ՎՃՆՈՅԱԻՈՐ ԱՐՋԵՐ

Ծայրագոյն Արեւելքի հոքայտոյի մէջ արջերը ճերմակ մազերով «վլնոց» ունին իրենց կուրծքին վրայ:

Վլնոցաւոր արջեր կան նաեւ Կեդրոնական եւ Արեւելեան Ասիոյ մէջ: Անոնք կ'ապրին իրենց սովորական արջի կեանքով. անտառի մէջ ուտելիք կը փնտռեն, ճառ կը մազլցին, սունկ եւ նորաբոյս տունկեր կը հաւաքեն, կը վախսցնեն պլտիկ անասունները: Անշուշտ անոնք եւս կը սիրեն մեղր եւ իրենց մեծ թաթերով կը տիրանան վայրի մեղուներու կամ գիւղի մօտ գտնուող փեթակներուն:

Վլնոցաւոր արջերը ձմրան քունի կը մտնեն այն շրջաններուն մէջ, ուր ճմեռը շատ խիստ կ'ըլլայ եւ ուտելիք գտնելը կը դժուարանայ: Ձմեռելու ընթացքին անոնք կ'ապրին առանց սնունդի:


Ծարժապատկեր

«ԱՐԱՐԱՏ»Ը՝ ԼԻՔԱՆԱՆԻ ՄԷՋ

Քանատահայ բեմադրիչ Աթոմ Էկոյեանի «Արարատ» ժապաւէնը Յունուար 23էն սկսեալ պիտի ցուցադրուի շարժապատկերի լիբանանեան սրահներուն մէջ (Փլանէթ - Ջուբ եւ Ապրաժ):

«Արարատ»ը, որուն առաջին ցուցադրութիւնը տեղի ունեցաւ 2002ի Քաննի փառատօնին, ժապաւէնի մէջ ժապաւէն մըն է, բեմադրիչին իսկ բացատրութեամբ: Անոր մէջ դեր ստանձնած են հայ եւ օտար նշանաւոր դերասաններ, ինչպէս Ծարլ Ազնաւուր, Արսինէ Խանճեան, Սիմոն Արգարեան, Էրիք Պօղոսեան, Տէյվիտ Ալփէյ, Պրէնթ Քարվըր, Քրիսթօֆըր Փլամըր եւ ուրիշներ:


Ժապաւէնը միաժամանակ կը ներկայացնէ քանի մը նիւթեր: Քանատահայ բեմադրիչ մը (Ծարլ Ազնաւուր) կը պատրաս-




տէ հայկական Յեղասպանութեան նուիրուած ժապաւէն մը, արուեստի մասնագէտ մը (Արսինէ Խանճեան) կ'ուսումնասիրէ ամերիկահայ գեղանկարիչ Արշիլ Կորքիի կեանքը, գործը եւ հայկական Յեղասպանութենէն անոր վերապրումը, քանատահայ երիտասարդ մը կ'օգնէ ժապաւէնին պատրաստութեան...

«Արարատ»ի մէջ տեղ գտած բազմաթիւ նիւթերը այս կամ այն կերպով կը կապուին հայկական Յեղասպանութեան:


Նշենք, որ «Արարատ»ը արդէն իսկ ցուցադրուած է հայաստանի, եւրոպայի, Աիւսթրալիայի, Նիւ Իորքի եւ Քանատայի մէջ: Ան արժանացած է խանդավառ ընդունելութեան:



Կետերը իրարու միացուր 1 - 49 գտնելու համար պահուած պատկերը:



«Պզտիկ - Մզտիկ» մարզանք ընել շատ կը սիրէ, յատկապէս արագ ու թեւաւն մարզանքները: Կրնաս գտնել, թէ այն ի՞նչ բարձունքէ կը սահի:



Կրնաս գտնել վարի մարմիններուն համապատասխանող գլուխները:

4	+5	.9	.6	.8	.7	=25
6	.3	.5	.9	.8	.2	=7
8	.3	.6	.5	.2	.1	=3
3	.5	.2	.5	.6	.8	=29

Կրնաս ամբողջացնել տախտակը + եւ - նշաններով:

Ժամանցին պատասխանները լոյս պիտի տեսնեն «Ազդակ»ի ճաբաթ, 18 Յունուար 2003ի թիւին մանկապատանեկան էջին մէջ:

Atelier D'art

Գծագրութեան դասընթացքներ

- * 6 էն 17 տարեկան պատանիներու համար:
- * Կուսուցանեն՝ գծանկար, ջրաներկ, կուաշ, իւղաներկ, մարդակազմութիւն, արուեստի պատմութիւն videoի վրայ:
- * Հաւաքական ցուցահանդէս:
- * Դասընթացքի տեւողութիւն՝ հինգ ամիս, 25 Յունուարէն 28 Յունիս, ամէն Շաբաթ օրերը կէսօրէ առաջ ժամը 10էն 12:30 եւ կէսօրէ ետք ժամը 3էն 5:30:
- * Սակ 200\$ դասընթացքի լման տեւողութեան (առանց այլեւայլ վճարումներու):

Արձանագրութեան համար ներկայանալ Atelier D'art-ի գրասենեակը ամէն օր կէսօրէ ետք ժամը 5էն 7:

Պուրճ Հանուտ Արմենիա պողոտայ, Սարդարապատ շէնք, 2րդ յարկ «ճոն Մայքըլ»ի վրայ, Հեռ. 01-268949 / 03-835078

ԱՄՍՈՒԱՆ ԲԱՐՅՈՒՄԸ

Կրնան մասնակցիլ Յուն 12 տարեկան աշակերտները: Կտրօնը ամբողջացնելէ ետք վայն հասցնել «ԱԶԴԱԿ»ի խմբագրատուն: Յաջորդ թիւով պիտի յայտարարուի մրցումը շահողին անունը: Ան պիտի ստանայ նուէր մը:

ԲԱՐՅԱՐԱՆ ԹԻՒ 10


- 1.- Արջի դր տեսակը գլխաւորաբար կը սնանի ծուկերով եւ ճովային անասուններով:-----
- 2.- Ռվ է «Արարատ» ժապաւէնին բեմադրիչը:-----
- 3.- Թուէ՛ երեք ձեւեր արդիւնաւէտ սորվելու համար:-----

Անուն - Մականուն -----
 Վարժարան -----
 Ծննդեան թուական -----
 Բեռածայնի թիւ -----

ԲԱՐՅԱՐԱՆ ԹԻՒ 9ի ՃԱԲՈՂԸ
 Բարցարան թիւ 9ի շահողը Ազգեպալ Թորոս (10 տարեկան «Մ. եւ Բ. Արսլանեան Ճեմարան»էն) շահեցաւ անցեալ ամսուան մրցումը: Ան իր նուէրը կրնայ ստանալ «Ազդակ»էն, «Ճաղկոյեան» կեդրոն:



ՃԵՐՄԱԿ ՎՋՆՈՅՈՎ ԱՐՋՐ



Անտառին մօտ, գետին եզերքը կ'ապրեր անտառին պահակը: Ան ձուկ, սկիռ, նապաստակ, թռչուն կ'որսար:

Օր մը պահակը պատուհանէն կը տեսնէ մեծ, շատ մեծ եւ բրդոտ արջ մը, որ կը վապէ դէպի իր խրճիթը, իսկ անոր ետեւէն՝ գայլերու վոհմակ մը. քիչ կը մնար, որ գայլերը հասնէին արջին: Եթէ հասնին, գիտէ՞ ի՞նչ կ'ըլլայ...: Յանկարծ արջը տան բակի դռնէն կը մտնէ եւ դուռը կը գոցէ, թաթը կը դնէ դրան վրայ, կը սեղմէ ու կը սպասէ:

Ծերունի պահակը անմիջապէս կը հասկնայ պատահածը, հրապանը կ'առնէ ու կ'ըսէ.


- Միշկա՛, օգնէ:

Ան կը սպաննէ գայլ մը, յետոյ՝ երկրորդը, երրորդը. միշտ նոյն խօսքերը կրկնելով.

- Միշկա.., օգնէ:

Երրորդ գայլին սպանութենէն ետք վոհմակը կը փախչի, իսկ արջը ամբողջ ձմեռը կը մնայ ճերուկին մօտ:

Գարնան, երբ արջերը դուրս կ'ելլեն իրենց որջերէն, ճերուկ պահակը ճերմակ վզնոց մը կը կապէ իր արջին վիզին եւ կը պուշապը-



նէ բոլոր որսորդները, որ ճերմակ վզնոցով արջը իր բարեկամն է:

Տարիներ կ'անցնին, ճերուկը աւելի ճերպեղծ, բայց աշխուժ է: Օր մը ան կրկին անտառ կ'երթայ որսի: Նապաստակ մը կը տեսնէ, կը հալածէ վայն, նշան կ'առնէ, եւ ... պում, նապաստակը կ'իյնայ, բայց ուրկէ ուր դուրս կ'ելլէ յովակ մը եւ կը յառաջանայ դէպի ճերուկը:

Մինչ ճերուկը վէճքը կը պատրաստէ, որ դարձեալ կրակէ, կը տեսնէ յովակին երկու ձագերը, որոնք հեռուէն կը վապեն դէպի իրենց մայրը: Ծերուկը կը շուարի՝ ինչպէս սպաննէ, չէ որ այդ յովակն ալ մայր է եւ ձագեր ունի:

Ծերուկը շուարած ետ - ետ կ'երթայ, իսկ մայր յովակը կը յառաջանայ: Ծերուկը բարձր ժայռի մը վրայ կ'ելլէ եւ յանկարծ կը յիշէ իր արջ բարեկամը ու ամբողջ ձայնով կը պոռայ.

- Միշկա՛, օգնէ... միշկա՛, օգնէ...

Արձագանգը կը կրկնէ ճերուկին ձայնը.

- Միշկա՛, օգնէ...

Հեռուէն տերեւներու խշխշոց կը լսուի: Յանկարծ վարմանալի բան մը կը պատահի: Արջ մը անտառէն դուրս կ'ելլէ եւ կը մօտենայ ճերուկին: Ծերուկը կրկին կ'աղաչէ. «Միշկա՛, օգնէ», բայց վարմանալի, արջը փոխանակ մայր յովակին վրայ յարձակելու, կը վապէ դէպի ձագուկները եւ երկուքը միասին կը բռնէ:


Յովակը այս տեսնելուն պէս ետ կը դառնայ դէպի իր ձագուկները եւ կը փորձէ յարձակիլ արջին վրայ. արջը կատղած կը փնթփնթայ, բարկացած ձայներ կը հանէ, ձագուկները գետին կը դնէ եւ կ'երթայ դէպի մարդը:

Մարդը վարմացած, վախէն քարացած է, բայց արջը կը մօտենայ առջեւի թաթերը վեր կ'առնէ, կը կանգնի ետեւի ոտքերուն վրայ եւ թաթով նշան կ'ընէ: Պահակը վարմացած՝ կը տեսնէ, որ իրեն օգնութեան եկող արջը ունի ճերմակ վզնոց՝ իր կապած ճերմակ վզնոցը:

ԱՐՋ ԱՊԲԵՐ

Արջ եմ, արջ եմ արջ աղբեր.
Մեղր ունիս, տե՛հ, շուտ բեր.
Ուտեմ, պարեմ՝ տումպա - տում.
Քէֆս լաւ է, տումպա - տում:
Անտառին մէջ ուրախ եմ.
Թաւուտ կ'երթամ տանձ կ'ուտեմ,
Թող ըլլայ սեւ, ըլլայ փուշ
Սեւ մոռն ալ է շատ անուշ
Դուն մի՛ ըսեր՝ բրդոտ ես,
Դուն մի՛ ըսեր՝ ճուռտ ես,
Ա՛յ, տես՝ ճառը երկնաքեր
Արագ կ'ելլեմ վեր ու վեր:
Կրնամ մրցիլ, շուտ հասի՛ր,
Ինձ պէս ծարպիկ դէ՛հ գտիր:
Ծանր արջ եմ, արջ աղբեր
Գործ տուր, կ'ընեմ օր - գիշեր:
Մեղուանոցի պահապան
Սիրով կ'ըլլամ, թէ որ տան:
Կրկեսին մէջ մարզիկ եմ
Ծաղրաճուկն ընկերն եմ:

«Ծիծեռնակ» 8 - 1985



ՎԱՋԳԵՆ ՏԱԼԵԱՆ

Արեւմտահայերէնի վերածուած



ՅՈՒՆԱՍՏԱՆԵՆ

Այս թիւով կը հրատարակենք Աթէնքի «Լեւոն եւ Սոփիա Յակոբեան» վարժարանի եւ դասարանի աշակերտներուն նկարը:


Նկարին մէջ եւ դասարանի աշակերտները՝ Յունաստանի խորհրդարան այցելութեան ընթացքին:




Սադօ Պէքրիճեան, Ա. դասարան, Արսուր Քասարճեան



Շանթ Գալուստեան, Գ. դասարան, Քառասուն Մանուկ



Զուլալ Շատոյեան, Ա. դասարան, Շամլեան Թաթևեան



Նարինէ
Քրիզորեան,
Կրդ դասարան,
Ս. Քաչ



Կարեն Էրմէրճեան, Ա. դասարան, Շամլեան Թաթևեան